Տեղեկանք

Պ-098-22.11.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.~~

~~«4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված վեց ամսվա ժամկետն անցնելուց հետո ժառանգությունը կարող է ընդունվել մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում, եթե ժառանգատուի անձի ինքնությունը չի հաստատվել մահվան պահից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում:»:~~

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1. 1. մասով հետևյալ բովանդակությամբ.

«1. 1. Այն դեպքում, երբ քաղաքացու ինքնությունը չի հաստատվել մահվան պահից առնվազն մեկ ամսվա ընթացքում, ժառանգության բացման օրը համարվում է մահվան պետական գրանցման օրը:»:

Հոդված 2. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ այն ժառանգատուների ժառանգության ~~ընդունման~~ հարաբերությունների նկատմամբ, որոնք մահացել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո և որոնց ինքնությունը չի հաստատվել մահվան պահից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:

~~3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում ժառանգությունը կարող է ընդունվել սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:~~ Եթե 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո մահացած և առնվազն մեկ ամսվա ընթացքում ինքնությունը չհաստատված քաղաքացու մահվան պետական գրանցումն իրականացվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ժառանգությունը կարող է ընդունվել սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր

ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Նշված կարգավորումից հետևում է, որ օրենսդիրը ժառանգության ընդունման համար սահմանել է ժառանգության բացման օրվանից, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետ:

Միևնույն ժամանակ, ժառանգի կողմից ժառանգություն ընդունելիս բարդություններ են առաջանում այն դեպքում, երբ ժառանգատու անձի մահը վրա է հասել հաստատապես հայտնի հանգամանքներում (օրինակ՝ ռազմական գործողությունների, տարերային աղետների ժամանակահատված), սակայն մինչև մահացածի ինքնությունը հաստատելն անցել է ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը: Այսպիսի իրավիճակ հատկապես առաջացավ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկիզբ առած պատերազմի հետևանքով:

2.**Առաջարկվող կարգավորման բնույթը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածում նախատեսվող լրացմամբ առաջարկվում է վերոնշյալ դեպքերում հնարավորություն տալ ժառանգներին ընդունել ժառանգություն ոչ թե անձի մահվան պահից վեց ամսվա ընթացքում, այլ մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում:

3.Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում կկարգավորվի ժառանգության ընդունման գործընթացը, վերը ներկայացված իրավիճակն առաջանալու հետևանքով ժառանգների կողմից ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում: